# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին

**« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2018թ.**

**ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ** ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրու-թյուններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.04.18_30.06.18 | Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.18_30.06.18 | Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան (ստուգված) 01.04.17_30.06.17 | Նախորդ ժամանակաշրջան 01.01.17_30.06.17 (ստուգված) |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 3 | 5,418,553 | 10,909,984 | 5,557,555 | 11,030,921 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | 3 | (2,341,013) | (4,887,758) | (3,120,111) | (6,273,952) |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | | **3,077,540** | **6,022,226** | **2,437,444** | **4,756,969** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 4 | 309,461 | 591,220 | 200,209 | 371,278 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | 4 | (94,929) | (185,088) | (77,902) | (145,852) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ** | | **214,532** | **406,132** | **122,307** | **225,426** |
| Եկամուտ շահաբաժիններից | | | | | |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից | 5 | 183,782 | 328,062 | 179,117 | 287,443 |
| Այլ գործառնական եկամուտներ | 6 | 295,940 | 552,726 | 650,095 | 965,282 |
| **Գործառնական եկամուտներ** | | **3,771,794** | **7,309,146** | **3,388,963** | **6,235,120** |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | 7 | (1,676,690) | (2,976,241) | (1,609,295) | (2,725,075) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 8 | (1,023,104) | (1,911,882) | (831,892) | (1,680,417) |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (831,166) | (1,639,587) | (761,733) | (1,499,925) |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս | 10 | | | | |
| **Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը** | | **240,834** | **781,436** | **186,043** | **329,703** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 11 | (41,714) | (154,493) | (129,366) | (182,781) |
| **Շահույթը (վնասը) հարկումից հետո** | | **199,120** | **626,943** | **56,677** | **146,922** |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 12 | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 12 | | | | |
| **Ժամանակաշրջանի զուտ շահույթ** | | | | | |
| Այդ թվում` | | | | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | | | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | | | | |

**Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2018թ.**

**ԿՏ**

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

**« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2018թ.**

**ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ** ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաշվետու ժամանակաշրջան 01.04.18_30.06.18 | Նախորդ ժամանակաշրջան 01.01.17_30.06.17 |
|---|---|---|
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | |
| Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ | (164,244) | 405,344 |
| Դրամական հոսքերի հեջավորում | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ | | |
| Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ | 32,849 | (81,069) |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո** | **(131,395)** | **324,275** |
| **Համապարփակ ֆինանսական արդյունք** | **67,725** | **380,952** |
| **Այդ թվում՝** | | |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | | |
| Չվերահսկվող բաժնեմաս | | |

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2018թ.

ԿՏ

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

**« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2018թ.**

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանո-թագրու-թյուններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջանի վերջի դրությամբ 30.06.2018 | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31.12.2017 |
|---|---|---|---|---|
| 1 | **Ակտիվներ** | | | |
| 1.1 | Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 13 | 24,266,779 | 28,780,840 |
| 1.2 | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | 13.1 | 72,884 | 63,194 |
| 1.3 | Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 14 | 9,269,776 | 4,238,080 |
| 1.5 | Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 16 | 128,064,008 | 130,892,375 |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 7,740,760 | 21,469,195 |
| 1.7 | Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 18 | 7,639,166 | |
| 1.10 | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 20 | 9,730,187 | 9,613,684 |
| 1.11 | Հետաձգված հարկային ակտիվներ | 11 | | |
| 1.12 | Կանխավճար շահութահարկի գծով | 21.1 | 147,795 | 113,435 |
| 1.13 | Այլ ակտիվներ | 21 | 3,665,824 | 3,297,832 |
| | ***Ընդամենը՝ ակտիվներ*** | | **190,597,179** | **198,468,635** |
| | | | | |
| 2 | **Պարտավորություններ** | | | |
| 2.1 | Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 22 | 7,582,642 | 17,260,519 |
| 2.2 | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 23 | 142,027,098 | 133,627,588 |
| 2.3 | Փոխառություն | 23.1 | 1,951,102 | 9,544,899 |
| 2.4 | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 24 | 5,319,840 | 5,139,360 |
| 2.7 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 11 | 161,384 | 96,740 |
| 2.8 | Պահուստներ | 30 | | |
| 2.9 | Այլ պարտավորություններ | 27 | 883,705 | 656,031 |
| | ***Ընդամենը՝ պարտավորություններ*** | | **157,925,771** | **166,325,137** |
| | | | | |
| 3 | **Կապիտալ** | | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 28 | 20,489,653 | 20,489,653 |
| 3.2 | Էմիսիոն եկամուտ | | 9,605,638 | 9,605,638 |
| 3.3 | Պահուստներ՝ | | 1,821,276 | 1,919,841 |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ | | 426,483 | 426,483 |
| 3.3.2 | Վերագնահատման պահուստներ | | 1,394,793 | 1,493,358 |
| 3.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | | 754,841 | 128,366 |
| 3.5 | Կապիտալի այլ տարրեր | | | |
| | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | | |
| | Փոքրամասնության բաժնեմաս | | | |
| | ***Ընդամենը՝ կապիտալ*** | | **32,671,408** | **32,143,498** |
| | ***Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ*** | | **190,597,179** | **198,468,635** |

**Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2018թ.**

ԿՏ

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

**« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2018թ.**

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ    ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | | | Էմիսիոն եկամուտ/վնաս | Գլխավոր պահուստ | Փոխարժեքային տարբերությունները արտերկրյա գործառնությունների | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ | Դրամական հոսքերի հեջավորում | Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ | Չբաշխված շահույթ/վնաս | Միջանկյալ շահութաբաժիններ | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Հետ գնված կապիտալ | Զուտ գումարը | | | | | | | | | | | |
| Հոդվածներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| **Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)** | | | | | | | | | | | | | | |
| ***1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017 թ. (ստուգված/չստուգված)*** | **19,093,378** | **-** | **19,093,378** | **7,790,481** | **426,483** | **-** | **(381,873)** | **-** | **1,297,921** | **7,485,470** | **-** | **-** | **-** | **35,711,860** |
| 1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | | | | - |
| **2. Վերահաշվարկված մնացորդը** | | | | | | | | | | | | | | - |
| **3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում`** | 1,396,275 | | 1,396,275 | 1,815,157 | | | | | | | | | | 3,211,432 |
| 3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,396,275 | | 1,396,275 | 1,815,157 | | | | | | | | | | 3,211,432 |
| 3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում` հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | - |
| **4. Համապարփակ եկամուտ** | | | | | | | | | | | | | | - |
| **5. Շահութաբաժիններ** | | | | | | | | | | (3,211,432) | | | | (3,211,432) |
| **6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում`** | | | | | | | | | | | | | | - |
| 6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | - |
| **7. Ներքին շարժեր, այդ թվում`** | | | | | | | 324,275 | | (41,811) | (721,894) | | | | (439,430) |
| 7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | | | | | | | | | | - |
| 7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | - |
| 7.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | - |
| 7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | (41,811) | | | | | (41,811) |
| 7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | 324,275 | | | (721,894) | | | | (397,619) |
| ***8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 Հունիսի 2017թ. (ստուգված/չստուգված)*** | **20,489,653** | **-** | **20,489,653** | **9,605,638** | **426,483** | **-** | **(57,598)** | **-** | **1,256,110** | **3,552,144** | **-** | **-** | **-** | **35,272,430** |

| Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ) | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2018 թ. (ստուգված/չստուգված)*** | **20,489,653** | **-** | **20,489,653** | **9,605,638** | **426,482** | **-** | **24,275** | **-** | **1,469,083** | **3,572,712** | **-** | **-** | **-** | **35,587,843** |
| 9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | (3,444,346) | | | | (3,444,346) |
| **10.Վերահաշվարկված մնացորդը** | 20,489,653 | - | 20,489,653 | 9,605,638 | 426,482 | - | 24,275 | - | 1,469,083 | 128,366 | - | - | - | 32,143,497 |
| **11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում`** | | | | | | | | | | | | | | - |
| 11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | | | | - |
| 11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում` հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | - |
| **12. Այլ համապարփակ եկամուտ** | | | | | | | | | | | | | | |
| **13. Շահութաբաժիններ** | | | | | | | | | | | | | | - |
| **14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում`** | | | | | | | | | | | | | | - |
| 14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | - |
| **15. Ներքին շարժեր, այդ թվում`** | | | | | | | (131,395) | | 32,830 | 626,475 | | | | 527,910 |
| 15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | | | | | | | | | | - |
| 15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | - |
| 15.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | - |
| 15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ/նվազում | | | | | | | | | 32,830 | | | | | 32,830 |
| 15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | (131,395) | | | 626,475 | | | | 495,080 |
| ***16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 Հունիսի 2018թ.*** | **20,489,653** | **-** | **20,489,653** | **9,605,638** | **426,482** | **-** | **(107,120)** | **-** | **1,501,913** | **754,841** | **-** | **-** | **-** | **32,671,407** |

**Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2018թ.**

ԿՏ

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
**« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2018թ.**

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթ ագրու թյուն | Նախորդ ժամանակաշրջան 30.06.2017 | Հաշվետու ժամանակաշրջան 30.06.2018 |
|---|---|---|---|
| **1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | x | x |
| ***Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը*** | | **5,277,045** | **4,314,382** |
| Ստացված տոկոսներ | | 9,692,496 | 9,126,116 |
| Վճարված տոկոսներ | | (5,524,326) | (4,715,887) |
| Ստացված կոմիսիոն գումարներ | | 349,052 | 591,219 |
| Վճարված կոմիսիոն գումարներ | | (145,852) | (185,088) |
| Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս) | | 1,057,399 | 784,708 |
| Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս) | | 257,298 | 429,030 |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | | 1,628,304 | 737,222 |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | (1,637,502) | (1,778,630) |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր | | (399,824) | (674,308) |
| ***Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից*** | | **(10,316,741)** | **(1,649,829)** |
| Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում) | | (19,137,738) | 4,800,203 |
| այդ թվում՝<br>վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում) | | (13,356,840) | 140,678 |
| առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում) | | (5,421,148) | 5,895,367 |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում) | | | |
| այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում) | | (359,750) | (1,235,842) |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) | | 8,820,997 | (6,450,032) |
| այդ թվում՝<br>հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում) | | 8,418,543 | (5,000,475) |
| այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում) | | 402,454 | (1,449,557) |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը** | | **(5,039,696)** | **2,664,553** |
| Վճարված շահութահարկ | | (68,178) | (34,830) |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | **(5,107,874)** | **2,629,723** |
| **2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | x | x |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | | | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | | | |
| Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում) | | | |
| Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | | (67,095) | (65,309) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (58,086) | (499,659) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում | | 139,785 | 231,320 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | (12,372) | (297,078) |
| **Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | **2,232** | **(630,726)** |
| **3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | x | x |
| Վճարված շահաբաժիններ | | (3,211,432) | |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | (275,445) | (539,593) |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | | (908,320) |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | | (609,974) | (608,850) |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | | 63,541 | 180,480 |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | | 3,211,432 | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | | |
| **Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | **(821,878)** | **(1,876,283)** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 407,278 | (191,525) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | | **(5,520,242)** | **(68,811)** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 13_2 | **33,547,636** | **31,843,954** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 13_2 | 28,027,394 | 31,775,143 |

**Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2018թ.**

## *Ծանոթագրություններ և բացահայտումներ*

“Յունիբանկ” ԲԲԸ-ում հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ օրենսդրության, ՀՀ “Հաշվապահական հաշվառման մասին” օրենքի, Բանկի կանոնադրությանը և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հրապարակվող հաշվետվությունները կազմվում են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների: Հաշվետվությունները կազմված են ՀՀՄՍ 9 պահանջներին համապատասխան:

Բանկի հետհաշվեկշռում հաշվառված են պահուստավորման ենթակա հետևյալ հոդվածները.

տրամադրված երաշխավորություններ – 856,622 հազ. դրամ

տրամադրված վարկային գծերի չօգտագործված մասեր – 6,365,301 հազ. դրամ

“Յունիբանկ” ԲԲԸ-ի աշխատակիցների թվաքանակը կազմում է 780 մարդ, այդ թվում՝ սպասարկող անձնակազմի 52 մարդ:

## *Տվյալներ ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվող վարկերի վերաբերյալ*

| | |
|---|---|
| Վարկի ժամկետը | պայմանագրային |
| Վարկի տարեկան տոկոսադրույք | 12-24%% |
| Վճարումներ | պայմանագրային |

Առանձին դեպքերում կապված ժամկետից, ապահովվածությունից և գումարից վարկերի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են վարկային կոմիտեի առանձին որոշմամբ:

*<u>Հիպոթեքային վարկ `անշարժ գույքի վերանորոգում</u>*

**Վարկի ժամկետը**

*մինչև 10 տարի*

**Վարկի գումարը**

*մինչև 25,000,000 դրամ*

**Տոկոսադրույք**

*սկսած տարեկան 14.0%*

*<u>Հիպոթեքային վարկ `անշարժ գույքի ձեռքբերում</u>*

**Սկզբնական վճար**

*սկսած անշարժ գույքի արժեքի 10%-ից*

**Վարկի ժամկետը**

*մինչև 20 տարի*

**Վարկի գումարը**

*մինչև 60,000,000 դրամ կամ մինչև 150.000 դոլար*

**Տոկոսադրույք**

*սկսած տարեկան 9.5%,*

*<u>Բիզնես վարկեր</u>*

**Վարկի ժամկետը**

*մինչև 10 տարի*

**Վարկի գումարը**

*մինչև 250.000.000 դրամ*

**Տոկոսադրույք**

*սկսած տարեկան 9%,*

Ներկայացված Ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ կից ծանոթագրությունները), Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց և Բանկի ղեկավարների, ինչպես նաև Բանկի կողմից տրամադրվող այլ վարկերի, մատուցվող ծառայությունների և սակագների վերաբերյալ տեղեկատվությունը Դուք կարող եք գտնել Յունիբանկ ԲԲԸ տնային էջում:
հասցե՝ www.unibank.am

| ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ | | |
|---|---|---|
| ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ» | | |
| Ավանդի հիմնական պայմաններ | | |
| Ավանդատեսակի գործողության ժամկետն է | | *01.06.18 – 31.12.18թթ. ներառյալ* |
| Ավանդի ներդրման արժույթը | | ՀՀ դրամ |
| Ավանդի ներդրման նվազագույն գումարը | | 100,000 |
| Ավանդի ներդրման ժամկետը | Տոկոսների վճարման կարգը | Տարեկան տոկոսադրույք |
| Առավելագույնը 6570 օր (18 տարի) | ժամկետի վերջում | 9.5%* |
| *Տարեկան տոկոսադրույքը կարող է վերանայվել Բանկի կողմից յուրաքանչյուր տարի: | | |
| Ավանդի առավելագույն գումարը | | 100,000,000 |
| Ավանդի տեսակը | | • Ավանդը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, ովքեր հանդիսանում են պետության կողմից «դրամագլուխ» ստացած երեխայի ծնողը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալը:<br>• Պարտադիր պայման է ավանդը երեխայի անունով ձևակերպելը, իսկ ծնողին կամ խնամակալին՝ որպես երրորդ անձ: |

**Գումարի համալրման հնարավորություն՝ այո**
Տոկոսների կապիտալացում չի իրականացվում:

**Մասնակի հետկանչման հնարավորություն՝ այո, սակայն միայն հետևյալ նպատակների համար.**
1. երեխայի ծնողի կամ խնամակալի հիփոթեքային վարկի վճարման համար
2. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ուսումնական հաստատության վարձավճարի համար /երեխայի ընտանիքի անդամի/
3. երեխայի ընտանիքի անդամի առողջության ապահովագրության վճարի համար:

**Ավանդը կարող է ամբողջությամբ հետկանչվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գրավոր պահանջով:**

Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ ArCa կամ Visa Electron քարտ:
Ինչպես նաև տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ:

**Լրացուցիչ տեղեկատվություն**

**Սակագներ և տուժանքներ**
1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:
2. Ժամկետային ավանդատու ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների համար յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 1200 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներն չի իրականացրել:
3. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում.
ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,
բ/ չի վճարվում ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարը, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների վճարում ժամկետի վերջում:
4. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կատարված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով

բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով՝ բանկում ներդրված փաստացի ժամանակահատվածի համար: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով: Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ Յունիբանկ ԲԲԸ Խորհրդի կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:
5. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

6. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:
7. *Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, այն տոկոսը, որն ավանդատուն կստանա 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի համար տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:*

**Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ**
**1.Տարեկան պարզ տոկոսադրույք**՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:
Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման բանաձև՝

ԱԳ * S/ 365 * Օր – 10% (եկամտահարկ), որտեղ՝

ԱԳ - ներդրված ավանդի գումար
S – տարեկան պարզ տոկոսադրույք
Օր – ավանդի ներդրման օրերի քանակ՝ հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի h. 907 կետ 1, համաձայն որի ավանդի գումարի նկատմամբ տոկոսագումար չի հաշվարկվում ավանդի ներդրման և վերադարձման օրերին:
**Օրինակ 1**
Ավանդի ներդրման օրերի քանակ- 6570 օր
Ներդրված ավանդի գումար- 100 000 ՀՀ դրամ
Տարեկան պարզ տոկոսադրույք- 9.5%

100 000 *9.5 /100 / 365 * 6568 -10% = 153 853.15 ՀՀ դրամ

2. **Տարեկան տոկոսային եկամտաբերություն (APY)**՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում.

$$A=\sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+APY)^{D_n/365}}$$ , որտեղ՝

A -ավանդի սկզբնական գումար,
n- ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համար,
N- ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետն համարվում է ավարտված,
$K_n$ - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում նաև պարտադիր վճարների հոսքեր:
$D_n$ - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական (n-րդ) դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_1$=0 :
APY- տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

- Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝

ա. Ավանդի չափ՝ 100 000 դրամ
բ. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 օր)
գ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 9.5%
դ. Տոկոսագումարների վճարումները՝ ավանդի գործողության ժամկետի վերջում
ե. Ավանդատուի կողմից ավանդի ստացման օրը կատարվող պարտադիր վճարներ՝
Ավանդային հաշվի սպասարկման պարտադիր վճար՝ 1200 դրամ
Ավանդային պայմանագրի գործողության վերջում վճարվող տոկոսագումարը ստացվում է՝
100 000 * 0.095=9 500 դրամ
n=1 , n=2
$D_1$=0 , $D_2$=365
$K_1$= -1 200 , $K_2$= 109 500

$$100\,000=\frac{-1\,200}{(1+APY)^{0/365}}+\frac{109\,500}{(1+APY)^{365/365}}$$

$$101\,200=\frac{109\,500}{(1+APY)^{365/365}}$$ , որտեղից APY = 0.082*100% = 8.2%

**3. Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հնարավոր հաշվարկը տոկոսագումարների վճարումների կանոնավոր հաճախականության դեպքում**

$APY= (1+r/n)^n -1$, որտեղ՝

APY- տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,

r-տարեկան պարզ տոկոսադրույքն է,

n- մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է

Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ժամկետի վերջում է ՝ n =1 , ապա

$APY= (1+0.095/1)^1 -1$,

$APY=0.095*100=9.5\%$

**Ավանդատուի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն**

Հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ավանդատուի իրավունքներն ենթակա են պաշտպանության դատական կարգով, ինչպես նաև ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Ավանդատուն կարող է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:

Բանկն իրավունք չունի ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորել արբիտրաժային համաձայնության կնքմամբ:

**Այլ տեղեկատվություն**

1.Ավանդ ներդնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների պետ.համարանիշ (սոցիալական քարտ) կամ դրանից հրաժարվելու մասին տեղեկանք:

2. Ժամկետային ավանդի գումարի վրա տոկոսը հաշվեգրվում է ավանդը Բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Տոկոսների հաշվեգրումը իրականացվում է օրական: Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարները իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե ավանդը ներդրված է արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են վճարման օրը ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

3.Ավանդի գծով հաշվեգրված տոկոսագումարն ենթակա է հարկման եկամտահարկով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որի դրույքաչափն է 10%: Ավանդատուին վճարվում է արդեն իսկ հարկված տոկոսագումարը:

4. Եթե ավանդի մարման օրը համընկնում է տոն և/կամ հանգստյան օրվա հետ, ապա ավանդի մարման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

5. Բանկում ներդրված ավանդներն երաշխավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ Ֆիզիկական անձանց Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամի կողմից: Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

6. Ձեզ հետաքրքրող լրացուցիչ այլ տեղեկատվություն կարող եք ստանալ՝ զանգահարելով թեժ հեռախոսակապի կենտրոն՝ (+37410) 59 55 55 հեռախոսահամարով:

Թարմացված է՝ 01/06/18 09:55

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿ «Դասական»

### Ավանդի հիմնական պայմանները

| Ավանդի ներդրման արժույթը | | | ՀՀ դրամ | ԱՄՆ Դոլար | Եվրո | ՌԴ ռուբլի |
|---|---|---|---|---|---|---|
| Ավանդի ներդրման նվազագույն գումարը | | | *100,000* | *200* | *200* | *20,000* |
| Ավանդի ներդրման ժամկետը | Տոկոսների վճարման կարգը | | | Տարեկան տոկոսադրույք | | |
| 30 օր | ժամկետի վերջում | | 5% | 1.0% | 0.5% | - |
| 31-60 օր | ժամկետի վերջում | | 5.5% | 2.0% | 1.0% | - |
| 61-80 օր | ամենամսյա | Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ | 5.6% | 2.4% | 1.15% | - |
| | ժամկետի վերջում | | 5.8% | 2.5% | 1.25% | - |
| 81-90 օր | ամենամսյա | Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ | 6.1% | 2.6% | 1.2% | - |
| | ժամկետի վերջում | | 6.3% | 2.7% | 1.3% | - |
| 91-180 օր | ամենամսյա | Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ | 7.8% | 3.4% | 1.4% | 5% |
| | ժամկետի վերջում | | 8.0% | 3.5% | 1.5% | 6% |
| 181 – 270 օր | ամենամսյա | Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ | 8.3% | 4.4% | 1.9% | 8% |
| | ժամկետի վերջում | | 8.5% | 4.5% | 2.0% | 8.5% |
| 271 – 365 օր | ամենամսյա | Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ | 8.8% | 4.6% | 2.8% | 8% |
| | ժամկետի վերջում | | 9.0% | 4.7% | 2.9% | 8.5% |
| 366 – 730 օր | ամենամսյա | Քարտային հաշիվ/ Բանկային հաշիվ | 9.3% | 4.65% | 3.1% | - |
| | ժամկետի վերջում | | 9.5% | 4.75% | 3.2% | - |
| Ավանդի առավելագույն գումարը | | | 100,000,000* AMD | *200,000* USD* | *100,000* EUR* | 10,000,000* RUR |

*Առավելագույն գումարը գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:

Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

Տոկոսների վճարման պայմաններն իրականացվում են ավանդատուի ցանկությամբ՝ ժամկետի վերջում կամ ամենամսյա, ավանդատուի բանկային հաշվին կամ քարտային հաշվին:
Տոկոսների կապիտալացում չի իրականացվում:

Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ Visa Electron քարտ:

Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ, իրավաբանական անձանց՝ «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգ:

### Լրացուցիչ տեղեկատվություն

**Սակագներ և տուժանքներ**

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:
2. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ժամկետային ավանդատու ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների համար յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 1200 և 5000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:
3. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ավանդատու հաճախորդների յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 5000 և 50000 ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Առանձին տեղեկանքի կամ փաստաթղթի կրկնօրինակների տրամադրման վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ, իսկ թղթապանակի (որոշակի ժամանակաշրջանի փաստաթղթերի) համար՝ 5000 ՀՀ դրամ: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում.
ա/ ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների ամենամսյա վճարում,
բ/ չի վճարվում ավանդի գումարի նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարը, եթե ժամկետային ավանդի պայմանագրով սահմանված է տոկոսների վճարում ժամկետի վերջում:
5. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կատարված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով՝ բանկում ներդրված փաստացի ժամանակահատվածի համար: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0%, իսկ ՀՀ դրամով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ՝ 0% տարեկան դրույքով: Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ Յունիբանկ ԲԲԸ Խորհրդի կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:
6. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

7. Բանկային ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:
8. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:
9. *Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, այն տոկոսը, որն ավանդատուն կստանա 1000 դոլար ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի համար տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:*

**Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ**
1.**Տարեկան պարզ տոկոսադրույք**՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:
Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման բանաձև՝

ԱԳ * S/ 365 * Օր – 10% (եկամտահարկ), որտեղ՝

ԱԳ - ներդրված ավանդի գումար
S – տարեկան պարզ տոկոսադրույք
Օր – ավանդի ներդրման օրերի քանակ՝ հաշվի առնելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի h. 907 կետ 1, համաձայն որի ավանդի գումարի նկատմամբ տոկոսագումար չի հաշվարկվում ավանդի ներդրման և վերադարձման օրերին:
**Օրինակ1**
Ավանդի ներդրման օրերի քանակ- 366 օր
Ներդրված ավանդի գումար- 1 000 ԱՄՆ դոլար
Տարեկան պարզ տոկոսադրույք- 4.75 %

1000 * 4.75 /100 / 365 * 364 -10% = 42.6 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ

2. **Տարեկան տոկոսային եկամտաբերություն** **(APY)**՝ ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում.

$$A=\sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+APY)^{D_n/365}},$$ որտեղ՝

A -ավանդի սկզբնական գումար,
n- ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համար,
N- ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետն համարվում է ավարտված,
$K_n$ - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում նաև պարտադիր վճարների հոսքեր:
$D_n$ - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական (n-րդ) դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_1$=0 :
APY- տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

- Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝

ա. Ավանդի չափ՝ 1000 ԱՄՆ դոլար
բ. Ավանդի գործողության ժամկետ՝ 366 օր, 1 տարի
գ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 4.75 %
դ. Տոկոսագումարների վճարումները՝ ավանդի գործողության ժամկետի վերջում
ե. Ավանդատուի կողմից ավանդի ստացման օրը կատարվող պարտադիր վճարներ՝
Ավանդային հաշվի սպասարկման պարտադիր վճար՝ տարեկան 1200 դրամ /2.5 ԱՄՆ դոլար/
Ավանդային պայմանագրի գործողության վերջում վճարվող տոկոսագումարը ստացվում է՝

1000 * 0.0475 =47.5 դոլար

n=1 , n=2

$D_1=0$ , $D_2=366$

$K_1=-2.5$ , $K_2=1047.5$

$$1000 = \frac{-2.5}{(1+APY)^{0/365}} + \frac{1047.5}{(1+APY)^{366/365}}$$

$$1002.5= \frac{1047.5}{(1+APY)^{366/365}}$$ , որտեղից APY = 0.0449*100% = 4.49%

**3. Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հնարավոր հաշվարկը տոկոսագումարինների վճարումների կանոնավոր հաճախականության դեպքում**

$APY= (1+r/n)^n- 1$, որտեղ՝

APY-տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

r-տարեկան պարզ տոկոսադրույքն է

n- մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է

Եթե տոկոսագումարների վճարման հաճախականությունը ժամկետի վերջում է ` n =1 , ապա

$APY= (1+0.0475/1)^1 -1$,

APY=0.0475*100 = 4.75 %

**Ավանդատուի իրավունքերի պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն**

Հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ավանդատուի իրավունքներն ենթակա են պաշտպանության դատական կարգով, ինչպես նաև ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Ավանդատուն կարող է իր իրավունքերի պաշտպանությունն իրականացնել անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:

Բանկն իրավունք չունի ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորել արբիտրաժային համաձայնության կնքմամբ:

Այլ տեղեկատվություն

1.Ավանդ ներդնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների պետ.համարանիշ (սոցիալական քարտ) կամ դրանից հրաժարվելու մասին տեղեկանք:

2. Ժամկետային ավանդի գումարի վրա տոկոսը հաշվեգրվում է ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Տոկոսների հաշվեգրումը իրականացվում է օրական: Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսագումարները իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե ավանդը ներդրված է արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են վճարման օրը ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

3.Ավանդի գծով հաշվեգրված տոկոսագումարն ենթակա է հարկման եկամտահարկով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որի դրույքաչափն է 10%: Ավանդատուին վճարվում է արդեն իսկ հարկված տոկոսագումարը:

4. Եթե ավանդի մարման օրը համընկնում է տոն և/կամ հանգստյան օրվա հետ, ապա ավանդի մարման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

5. Բանկում ներդրված ավանդներն երաշխավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ Ֆիզիկական անձանց Ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամի կողմից: Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

6. Ձեզ հետաքրքրող լրացուցիչ այլ տեղեկատվություն կարող եք ստանալ՝ զանգահարելով թեժ հեռախոսակապի կենտրոն՝ (+37410) 59 55 55 հեռախոսահամարով: